«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«17» 08 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-29/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-113-րդ կետերով հայտնում ենք հետևյալը.

1. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 31.07.2015թ. ներկայացված բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ Նարինե Սարուխանյանը

(այսուհետ նաև՝ Ահազանգող) 01.07.2015թ. ժամը 14:43-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) թեժ գծին և հայտնել, որ «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերում Պատվիրատուն չի ներառել հրավերի օրինակելի ձևով նախատեսված թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածները:

Ահազանգողը գտնում է, որ Պատվիրատուն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, որի արդյունքում ստեղծվել են անհավասար պայմաններ գնման ընթացակարգի մյուս մասնակիցների համար:

Ահազանգողը խնդրել է չեղյալ հայտարարել «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով ընթացակարգը և հայտարարել նոր ընթացակարգ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 03.07.2015թ. գրությամբ հայտնել է, որ համաձայն չէ ահազանգով նշված դիտողություններին և ներկայացրել է հիմնավորումներ, ըստ որի.

1. Հավելված 3.2 («Հայտարարություն մասնագիտական փորձառության մասին») ներկայացնելու պահանջ չի սահմանվել, քանի որ Ընթացակարգի գնման ապրանք հանդիսացող «Դահլիճային աթոռ»-ը կարող է մատակարարել ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, և Պատվիրատուի համար կարևոր է միայն գնային առաջարկի և տեխնիկական բնութագրերի պահպանումը, ինչպես նաև գնման առարկա չի հանդիսանում անշարժ գույքը:

2. Հավելված 3.3 («Հայտարարություն տեխնիկական միջոցների մասին») ներկայացնելու պահանջ չի սահմանվել, քանի որ Պատվիրատուն կարևոր չի համարել, որ մասնակիցը ներկայացնի, թե ինչ տեխնիկական միջոցներով կտեղափոխի գնման առարկա հանդիսացող դահլիճային աթոռները:

3. Հավելված 3.5 («Հայտարարություն ֆինանսական միջոցների մասին») ներկայացնելու պահանջ չի սահմանվել, քանի որ ֆինանսական միջոցների մասին պահանջը սահմանվել է հրավերի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման պահանջները և դրանց գնահատման կարգը» գլխում,

և կոնկրետ նույն գնման ընթացակարգի ընթացքում երկու մասնակիցներն էլ եղել են իրավաբանական անձ և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

4. Հավելված 3.6 («Հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին») ներկայացնելու պահանջ չի սահմանվել, քանի որ Պատվիրատուն կարևոր չի համարում մասնակցի կողմից գնման առարկա հանդիսացող դահլիճային աթոռների ձեռքբերման և տեղափոխման դեպքում այդ պահանջը:

Պատվիրատուն նշել է, որ թվարկված պահանջները արտացոլված են հրավերի՝ «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման պահանջները և դրանց գնահատման կարգը» գլխում:

Պատվիրատուն նաև հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցել են երկու ընկերություն, որոնց հայտերը համապատասխանել են հրավերին և գնահատվել են բավարար, ինչն էլ ամենահիմնական գործոնն է:

Նարինե Սարուխանյանը 06.07.2015թ. Կենտրոնին ներկայացված գրությամբ Պատվիրատուի դիրքորոշման վերաբերյալ ներկայացրել է առարկություններ՝ կից ներկայացնելով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի օրինակելի ձևի թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածները և կրկին խնդրել է չեղյալ հայտարարել «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով ընթացակարգը և հայտարարել նոր ընթացակարգ՝ հետագա թյուրիմացություններից խուսափելու և մասնակիցների համար հավասար պայմաններ ստեղծելու համար:

Կենտրոնում ս.թ. հուլիսի 6-ին ժամը 11:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ ահազանգողը պնդել է իր դիրքորոշումը և պահանջը, իսկ Պատվիրատուն ամբողջությամբ առարկել է ներկայացված ահազանգի դեմ և հայտնել, որ իր կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից *հաստատված հայտարարություն*,

պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ***հրավերով պահանջվում*** է, որ մասնակիցը *հայտով ներկայացնում է հայտարարություն*, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:

Կարգի 66-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ***հրավերով պահանջվում է,*** որ մասնակիցն իր *հայտով ներկայացնի հայտարարություն* պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ***հրավերով պահանջվում է,*** որ

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «դ» պարբերության հիման վրա, ապա մասնակիցը *հայտով ներկայացնում է հայտարարություն* պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Կարգի 68-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ***հրավերով պահանջվում է,*** որ մասնակիցն իր *հայտով ներկայացնի հայտարարություն* պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:

ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 169-Ա հրամանով՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 667-Ա հրամանում կատարվել են փոփոխություններ և հրամանի 1-ին կետը լրացվել է նոր 5.1-րդ ենթակետով, որի «ա» պարբերությամբ հաստատվել են շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով ապրանքների գնման հայտարարության և հրավերի, այդ թվում նաև թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածների տեքստերի օրինակելի ձևերը:

«137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

Հրավերի 1-ին մասի 2-րդ՝ «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնում՝

- «մասնագիտական փորձառություն» և «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերը չեն սահմանվել,
- «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման կարգում միաժամանակ ներառվել են Կարգի 67-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով,
- «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման կարգով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվել է ներկայացնել վերոհիշյալ որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր՝ չսահմանելով պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նկատմամբ սահմանված նվազագույն պահանջներ: Նշենք որ «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման համար մասնակիցներին ներկայացվող պահանջները (բացառությամբ Կարգի 66-րդ և 68-րդ կետերի 1-ին ենթակետերով պահանջվող հայտարարությունների), ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, սահմանվում են շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ (Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերություն):

Հրավերի 2-րդ մասի 2-րդ՝ «Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու մասին հրահանգ» բաժնում՝

- «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով հայտով ներկայացվող փաստաթղթի (փաստաթղթերի) ներկայացման կարգը

սահմանվել է թերի՝ հստակ չի սահմանվել Կարգի 65-րդ կետի 2-րդ կետով նախատեսված պահանջը, ինչպես նաև մասնակիցներից որպես համանման (նմանատիպ) համարվող տնտեսական գործունեության տեսակ նշվել է «համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր», այնինչ, գնման առարկա է հանդիսացել համերգային դահլիճի աթոռների ձեռքբերումը:

- «տեխնիկական միջոցներ» և «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների մասով մասնակիցներից պահանջվել է հայտով ներկայացնել համապատասխանաբար թիվ 3.3 և 3.6 հավելվածները, որոնք Հրավերին կցված չեն:
- «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հայտով ներկայացվող փաստաթղթի (փաստաթղթերի) ներկայացման կարգ չի սահմանվել:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուն Հրավերում հստակ չի սահմանել Կարգի 65-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ կետերով սահմանված Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որակավորման չափանիշների ներկայացման և գնահատման կարգը, ինչպես նաև Հրավերում չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 169-Ա հրամանով հաստատված թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածների օրինակելի ձևերը, ինչի պայմաններում «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը խախտել է Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև Կարգի 65-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ կետերով նախատեսված պահանջները:

«137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին 30.07.2015թ. www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարության համաձայն՝ «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Հ.Սմբատ» ՍՊԸ-ի միջև 27.07.2015թ. կնքվել է «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով պայմանագիր:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում:

Նույն ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «ե» պարբերությամբ՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է քննության առնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած բողոքը և «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

<u>2. «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.08.2015թ. թիվ 266 գրությամբ հայտնել է, որ որպես Պատվիրատու չի ընդունում ահազանգում և բողոքում նշված դիտողությունները:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ Ընթացակարգը տեղի է ունեցել 2015թ. հունիսի 26-ին, որին մասնակցել են երկու կազմակերպություններ՝ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն

և «Հ.ՍՄԲԱՏ» ՍՊԸ-ն: Երկու ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները համապատասխանել են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: «Հ.ՍՄԲԱՏ» ՍՊԸ-ն առաջարկել է 2.196.000 ՀՀ դրամ, իսկ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն՝ 2.680.200 ՀՀ դրամ:

Պատվիրատուն հայտնել է, որ «Հ.ՍՄԲԱՏ» ՍՊԸ-ի գնային առաջարկը եղել է ամենացածրը, որի հիման վրա վերջինիս հետ 27.07.2015թ. կնքվել է պայմանագիր, քանի որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ից որևէ պաշտոնական գրություն չի ստացվել:

Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի օրինակելի ձևի և թիվ 3.1, և թիվ 3.2 հավելվածները վերնագրված են՝ «Հայտարարություն մասնագիտական փորձառության մասին», և քանի որ գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը, գնումների պլանի լրացման կարգի համաձայն, չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա թիվ 3.1 հավելվածը հանվում է հրավերից, որը բնութագրում է մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթղթերը: Հրավերում Պատվիրատուի համար կարևորվել է հիմնականում գնային առաջարկի և տեխնիկական բնութագրերի պահպանումը, իսկ տվյալ դեպքում Ընթացակարգի գնման առարկան անշարժ գույքը չէ:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև հետևյալը.

- Թիվ 3.3 հավելված («Հայտարարություն տեխնիկական միջոցների մասին») - Պատվիրատուն համապատասխան պահանջներ չի սահմանել և ըստ գնման ընթացակարգի օրինակելի ձևի թիվ 3.3 հավելվածի՝ «Հայտարարություն տեխնիկական միջոցների մասին», տեխնիկական միջոցների առկայության հիմնավորման մասը հանվում է սույն հավելվածից, և իմաստազուրկ է դառնում մասնակիցների առջև պահանջ դնել՝ առանց հիմնավորման ներկայացնելով տեխնիկական միջոցների առկայության վերաբերյալ հայտարարություն:
- Թիվ 3.5 հավելված («Հայտարարություն ֆինանսական միջոցների մասին») - Պատվիրատուն նման պահանջ սահմանել է հրավերի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման պահանջները և դրանց գնահատման կարգը» գլխում, և կոնկրետ նույն գնման ընթացակարգի պարագայում երկու

մասնակիցներն էլ եղել են իրավաբանական անձ և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

- Թիվ 3.6 հավելված («Հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին») - Պատվիրատուն համապատասխան պահանջներ չի սահմանել, և դարձյալ ըստ գնման ընթացակարգի օրինակելի ձևի թիվ 3.6 հավելվածի՝ «Հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին»՝ աշխատանքային ռեսուրսների առկայության հիմնավորման մասը հանվում է նույն հավելվածից, և իմաստազուրկ է դառնում մասնակիցների առջև ուղղակի պահանջ դնել՝ առանց հիմնավորման ներկայացնելով աշխատանքային ռեսուրսների առկայության վերաբերյալ հայտարարություն:

Պատվիրատուն նշել է նաև, որ վերը նշած բոլոր հավելվածների վերաբերյալ պահանջները արտացոլված են հրավերի՝ «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման պահանջները և դրանց գնահատման կարգը» գլխում:

Որպես եզրահանգում «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ ահազանգում և դրա հիման վրա բերված բողոքում նշված դիտողությունները չէին կարող անհավասար պայմաններ ստեղծել Ընթացակարգի մասնակիցների համար, հետևաբար չէին կարող նաև ազդեցություն ունենալ վերոնշյալ գնման ընթացակարգի բովանդակության վրա:

3. ԳԲԽ-29/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-29/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին 30.07.2015թ. www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարության համաձայն՝ «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական

դպրոց» ՊՈԱԿ-ի և «Հ.Սմբատ» ՍՊԸ-ի միջև 27.07.2015թ. կնքվել է «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով պայմանագիր:

3. Նարինե Սարուխանյանը 01.07.2015թ. ժամը 14:43-ին ահազանգել է Կենտրոնի թեժ գծին և հայտնել է, որ «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերում Պատվիրատուն չի ներառել հրավերի օրինակելի ձևով նախատեսված թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածները:

4. Կենտրոնում 06.07.2015թ. ժամը 11:00-ին կազմակերպված քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում է արձանագրվել, սակայն Պատվիրատուն չի ընդունել կատարած խախտումը և վերջինս չի համաձայնվել վերացնել այն:

5. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետի «դ» պարբերությամբ, 31.07.2015թ. բողոքարկման գործընթաց է նախաձեռնել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում:

<u>4. ԳԲԽ-29/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Նարինե Սարուխանյանի 01.07.2015թ. ժամը 14:43-ին ներկայացրած ահազանգը, «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 14.08.2015թ. թիվ 266 գրությունը, «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից *հաստատված հայտարարություն*, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ***հրավերով պահանջվում*** է, որ մասնակիցը *հայտով ներկայացնում է հայտարարություն*, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:

Կարգի 66-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ***հրավերով պահանջվում է,*** որ

մասնակիցն իր *հայտով ներկայացնի հայտարարություն* պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ***հրավերով պահանջվում է,*** որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ինչպես նաև եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «դ» պարբերության հիման վրա, ապա մասնակիցը *հայտով ներկայացնում է հայտարարություն* պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:

Կարգի 68-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ***հրավերով պահանջվում է,*** որ մասնակիցն իր *հայտով ներկայացնի հայտարարություն* պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:

ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 169-Ա հրամանով՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 667-Ա հրամանում կատարվել են փոփոխություններ և հրամանի 1-ին կետը լրացվել է նոր 5.1-րդ ենթակետով, որի «ա» պարբերությամբ հաստատվել են շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով ապրանքների գնման

հայտարարության և հրավերի, այդ թվում նաև թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածների տեքստերի օրինակելի ձևերը:

Հրավերի 1-ին մասի 2-րդ՝ «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնում՝

- «մասնագիտական փորձառություն» և «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերը չեն սահմանվել,
- «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման կարգում միաժամանակ ներառվել են Կարգի 67-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով,
- «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման կարգով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվել է ներկայացնել վերոհիշյալ որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթեր՝ չսահմանելով պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նկատմամբ սահմանված նվազագույն պահանջներ: Նշենք որ «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման համար մասնակիցներին ներկայացվող պահանջները (բացառությամբ Կարգի 66-րդ և 68-րդ կետերի 1-ին ենթակետերով պահանջվող հայտարարությունների), ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, սահմանվում են շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ (Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերություն):

Հրավերի 2-րդ մասի 2-րդ՝ «Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու մասին հրահանգ» բաժնում՝

• «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով հայտով ներկայացվող փաստաթղթի (փաստաթղթերի) ներկայացման կարգը սահմանվել է թերի՝ հստակ չի սահմանվել Կարգի 65-րդ կետի 2-րդ կետով նախատեսված պահանջը, ինչպես նաև մասնակիցներից որպես համանման (նմանատիպ) համարվող տնտեսական գործունեության տեսակ նշվել է «համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր», այնինչ, գնման առարկա է հանդիսացել համերգային դահլիճի աթոռների ձեռքբերումը:

• «տեխնիկական միջոցներ» և «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների մասով մասնակիցներից պահանջվել է հայտով ներկայացնել համապատասխանաբար թիվ 3.3 և 3.6 հավելվածները, որոնք Հրավերին կցված չեն:

• «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հայտով ներկայացվող փաստաթղթի (փաստաթղթերի) ներկայացման կարգ չի սահմանվել:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Գտնում ենք, որ Պատվիրատուն Հրավերում հստակ չի սահմանել Կարգի 65-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ կետերով սահմանված Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որակավորման չափանիշների ներկայացման և գնահատման կարգը, ինչպես նաև Հրավերում չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 169-Ա հրամանով հաստատված թիվ 3.2, 3.3, 3.5 և 3.6 հավելվածների օրինակելի ձևերը, ինչի պայմաններում «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը խախտել է Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ինչպես նաև Կարգի 65-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ կետերով նախատեսված պահանջները:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Հ.Սմբատ» ՍՊԸ-ի միջև 27.07.2015թ. կնքվել է «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով պայմանագիր և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը՝ առաջարկում ենք «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

31.07.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ «Երևանի Գ. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «137ԴՊ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-29/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան